ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**ՆԱԽԱԳԱՀ**

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Տիգրան Մեծ 4, հեռ.՝ (+374 60) 830 840, (+374 60) 830 850
Էլ-փոստ՝ info@competition.am, վեբ կայք՝ http://www.competition.am

«09» 07 2021 թ.
No ՀՀ-1703

**ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁ**
**ՀՈՎԻԿ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ**
***(հասցե՝ Կիպրոս, Լիմասսոլ, Հոկտեմբերի պող. 28, շին. 355, բն. 1003)***

Հարգելի պարոն Մկրտչյան,

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) 2021 թվականի հուլիսի 6-ի ««Մեթալ Օքսայդս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և ֆիզիկական անձ Հովիկ Մկրտչյանի կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին» թիվ 145-Ա որոշմամբ հարուցել է վարչական վարույթ:

Ձեր լսված լինելու իրավունքն իրացնելու նպատակով կարող եք երկշաբաթյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել գրավոր դիրքորոշում և այն հիմնավորող նյութեր հարուցված վարչական վարույթում քննարկվող հարցի վերաբերյալ: Ձեր հիմնավոր միջնորդության հիման վրա երկշաբաթյա ժամկետը Հանձնաժողովի նախագահի գրությամբ կարող է երկարաձգվել մինչև երկշաբաթյա ժամկետով:

Տեղեկացնում ենք նաև, որ Հանձնաժողովի թիվ 145-Ա որոշումն ստանալու օրվանից երկշաբաթյա ժամկետում Ձեզ վերագրվող իրավախախտման փաստն ընդունելու և իրավախախտման հետևանքները վերացրած լինելու դեպքում կարող եք արագացված վարույթ կիրառելու մասին միջնորդություն ներկայացնել Հանձնաժողով, ընդ որում, արագացված վարույթի կիրառման արդյունքում պատասխանատվության

միջոց կիրառելիս պատասխանատվության միջոցը չի կարող գերազանցել տվյալ իրավախախտման համար նախատեսված ամենախիստ պատասխանատվության միջոցի մեկ երկրորդը:

Կից ներկայացվում է թիվ 145-Ա որոշման պատճենը:

*Առդիր՝ «3» թերթ:*

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՀԱՅԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

*Համակենտրոնացումների, պետական օժանդակության և պետական գնումների վերահսկողության բաժին*
*Կատարող՝ Աննա Կոստանյան*
*Հեռ. (+374 60) 830-840 (233)*

**competition.am կայքում հրապարակման օրը՝ 06 սեպտեմբերի 2021 թվական:**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 հուլիսի 2021 թվականի թիվ 145-Ա

## «ՄԵԹԱԼ ՕՔՍԱՅԴՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁ ՀՈՎԻԿ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) 2021 թվականի հուլիսի 6-ի դռնբաց նիստում, քննարկելով «ՄԵԹԱԼ ՕՔՍԱՅԴՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) և ֆիզիկական անձ Հովիկ Մկրտչյանի կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին հարցը,

## Պ Ա Ր Զ Ե Ց

Հանձնաժողովի մրցակցության գնահատման և վերահսկողության վարչության համակենտրոնացումների, պետական օժանդակության և պետական գնումների վերահսկողության բաժնի կողմից 2021 թվականի հունիսի 30-ին ներկայացվել է զեկուցագիր (այսուհետ՝ Զեկուցագիր) չհայտարարագրված համակենտրոնացումների հնարավոր դեպքերի հայտնաբերման նպատակով իրականացված ուսումնասիրության վերաբերյալ, որի շրջանակներում դիտարկվել են 2018 թվականի ընթացքում տեղի ունեցած տնտեսավարող սուբյեկտների միացման, միաձուլման, փայաբաժնի ձեռքբերման գործարքները:

Իրականացված ուսումնասիրության ընթացքում հիմք է ընդունվել Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի (այսուհետ՝ Ռեգիստր) գործակալության https://www.e-register.am/ պաշտոնական էլեկտրոնային համակարգում առկա տեղեկատվությունը:

Մասնավորապես, համաձայն վերը նշված տեղեկատվության 2018 թվականի հունվարի 17-ին ֆիզիկական անձ Հովիկ Մկրտչյանը ձեռք է բերել Ընկերության կանոնադրական կապիտալում Ռոման Դավթյանին պատկանող 100 տոկոս բաժնեմասից 80 տոկոսը: Ուսումնասիրության շրջանակներում Հանձնաժողովի նախագահի 2021 թվականի ապրիլի 7-ի N ԳԳ-826 գրությամբ Ընկերությունից պահանջվել է համապատասխան տեղեկատվություն:

Ընկերության կողմից 2021 թվականի մայիսի 7-ին Հանձնաժողով ներկայացված տեղեկատվության համաձայն Ընկերությունը նախատեսում է զբաղվել հանքարդյունաբերությամբ:

Միաժամանակ նշվել է, որ ֆիզիկական անձ Հովիկ Մկրտչյանը Կիպրոսի հանրապետության քաղաքացի է, Հայաստանի Հանրապետությունում գրանցված այլ ընկերությունում փայաբաժին չունի: Ընկերության տնօրեն Գրիգոր Դավիթի Ավագյանին է պատկանում «ԱՋՕ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 100 տոկոս բաժնեմասը (իրականացնում է շինարարական գործունեություն):

Միաժամանակ նշվել է, որ Հովիկ Մկրտչյանի և Ընկերության միջև անձանց խմբի հատկանիշներ առկա չեն:

Ռեգիստրի ուսումնասիրությունից պարզվել է, որ Գրիգոր Դավիթի Ավագյանը հանդիսանում է նաև «ԳԵԳԱՄԵՏ ՊԼՅՈՒՍ», «ԱՐՄԱՈՒՆԹ ԳՐՈՒՊ», «ԿՈՄՊՈԶԻՏ ՄԵՏԱԼ» փակ բաժնետիրական ընկերությունների տնօրենը:

««Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» 2021 թվականի մարտի 3-ի ՀՕ-92-Ն օրենքի (ուժի մեջ է մտել 2021 թվականի մայիսի 31-ին) 1-ին հոդվածով «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքը (այսուհետ նաև՝ Օրենք) շարադրվել է նոր խմբագրությամբ:

Մինչև 2021 թվականի մայիսի 31-ը գործող խմբագրությամբ Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ տնտեսվարող սուբյեկտների համակենտրոնացում է համարվում տնտեսվարող սուբյեկտի կողմից Հայաստանի Հանրապետությունում գրանցված այլ տնտեսվարող սուբյեկտի փայաբաժնի ձեռքբերումը, եթե դա ինքնին կամ ձեռք բերողին արդեն պատկանող փայաբաժնի հետ միասին կազմում է այդ տնտեսվարող սուբյեկտի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի 20 տոկոսը կամ ավելին:

Մինչև 2021 թվականի մայիսի 31-ը գործող խմբագրությամբ Օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տնտեսվարող սուբյեկտների համակենտրոնացումը, մինչև գործողության մեջ դնելը, ենթակա է հայտարարագրման, եթե՝ համակենտրոնացման մասնակիցների ակտիվների կամ հասույթի ընդհանուր արժեքը (չափը) կամ մասնակիցներից առնվազն մեկի ակտիվների կամ հասույթի արժեքը (չափը) դրա ստեղծմանը նախորդող վերջին ֆինանսական տարում գերազանցել է Հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 16-ի «Հայտարարագրման ենթակա համակենտրոնացումների մասնակցի (մասնակիցների) ակտիվների և հասույթ(ներ)ի արժեքը (չափը) սահմանելու, տնտեսվարող սուբյեկտների համակենտրոնացման հայտարարագրման կարգի հայտարարագրի ձևի մասին» թիվ 478-Ն որոշմամբ սահմանված ակտիվների կամ հասույթ(ներ)ի արժեքը (չափը):

Մինչև 2021 թվականի մայիսի 31-ը գործող խմբագրությամբ Օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին ենթակետի համաձայն՝ արգելվում է հայտարարագրման ենթակա համակենտրոնացումը գործողության մեջ դնելը՝ մինչև Հանձնաժողովի կողմից որոշում կայացնելը (չհայտարարագրված համակենտրոնացում):

Մինչև 2021 թվականի մայիսի 31-ը գործող խմբագրությամբ Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի խախտման դեպքում Հանձնաժողովն իրավասու է իր որոշմամբ տալու նախազգուշացում կամ նշանակելու տուգանք:

Մինչև 2021 թվականի մայիսի 31-ը գործող խմբագրությամբ Օրենքի 36-րդ հոդվածի 4.1-ին հոդվածի համաձայն համակենտրոնացումը չհայտարարագրելու համար նշանակվող տուգանքի չափը կազմում է մինչև հինգ միլիոն դրամ:

Վերոգրյալ իրավակարգավորումներին նույնաբովանդակ դրույթներ նախատեսված են նաև Օրենքի 13-րդ, 15-րդ, 73-րդ, 92-րդ և 93-րդ հոդվածներով:

Տվյալ պարագայում Զեկուցագրի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Ընկերության ակտիվների արժեքը գերազանցում է Հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 478-Ն որոշմամբ սահմանված ակտիվների արժեքը, ինչպես նաև ներկայացված տեղեկությունների համաձայն գործարքի մասնակիցների միջև անձանց խմբի հատկանիշներ առկա չեն, հետևաբար Ընկերության և ֆիզիկական անձ Հովիկ Մկրտչյանի

կողմից 2018 թվականի հունվարի 17-ի համակենտրոնացումը Օրենքով սահմանված կարգով չհայտարարագրելը առերևույթ պարունակում է Օրենքի խախտման հատկանիշներ:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում Ընկերության և ֆիզիկական անձ Հովիկ Մկրտչյանի կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ հարուցել վարույթ:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, 79-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետը, 83-րդ հոդվածի 1-ին մասը և 42-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հանձնաժողովը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. «ՄԵԹԱԼ ՕՔՍԱՅԴՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և ֆիզիկական անձ Հովիկ Մկրտչյանի կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ հարուցել վարույթ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՆԱԽԱԳԱՀ** **Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2021 թ. հուլիսի 06
Երևան